ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի
կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 6 հուլիսի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

,, Միասնական Սոցիալական Ծառայություն ,, Պետական մարմին

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Ալավերդի Ալավերդի ք. Սայաթ-Նովայի փողոց 3/8 նախկին շրջխորհրդի շենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր 25.06.2021թ թիվ 1784

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 06072021-06-0010, գաղտնաբառ՝ 46MXLJIJAIKD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-002-0027-0039-001	Նախկին շրջխորհրդի շենք	102.2 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը մինչև՝ 25.12.2022թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Սուրեն Սարգսյան

Հբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 06072021-06-0010, գաղտնաբառ՝ 46MXLJIJAIKD

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Նոտարական ակտի կոդ: 598-20210625-37-5195154
Նոտարական ակտի գաղտնագիր: S30S9O

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Ալավերդի
երկու հազար քսանմեկ թվականի հունիսի քսանհինգին

Մի կողմից՝ քաղ. **ՄՀԵՐ ԲՈՐԻՍԻ ՄԱԿԻՉՅԱՆԸ**, ծնված՝ 26/01/1976թ-ին, ՀԾՀ՝ 3601760061, նույնականացման քարտ՝ 009800400, տրված՝ 010-ի կողմից, 16/01/2018թ-ին, հաշվառված՝ Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ Փ., 15 /ՏԱՍՆՀԻՆԳ/ Շ, 9 /ԻՆԸ/ ԲՆ հասցեում, այսուհետ <<Վարձատու>>

և մյուս կողմից՝ **«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը** /հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. / 13, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511/, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար՝ **ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՇԽԱՆԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ**, ում անունից համաձայն **23.06.2021 թվականին տրված N 02/12-1/22543-21** լիազորագրի հանդես է գալիս **ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԸ**, ծնված՝ 11/11/1961թ-ին, ՀԾՀ՝ 2108610073, նույնականացման քարտ՝ 005765847, տրված՝ 055-ի կողմից, 10/03/2017թ-ին, հաշվառված՝ ԼՈՌԻ ՄԱՐԶ, Գ. ՇՆՈՂ, 6 /ՎԵՑ/ Փ., 16 /ՏԱՍՆՎԵՑ/ Տ հասցեում, այսուհետ <<Վարձակալ>>

Կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

Ի. Պայմանագրի առարկան.
1.1Սույն պայմանագրին համապատասխան՝ վարձատուն վարձակալին, համապատասխան վարձավճարի դիմաց, նրա տիրապետմանը և օգտագործմանն է տրամադրում՝
մարզ Լոռի, համայնք Ալավերդի Ալավերդի ք. Սայաթ-Նովայի փողոց 3/8 /երեք կոտորակ ութ/ նախկին շրջխորհրդի շենք հասցեում գտնվող սեփականության իրավունքով վարձատուին պատկանող անշարժ գույքի՝ **2037,2 քմ** /երկու հազար երեսունյոթ ամբողջ երկու տասնորդական/ մակերեսով շենք շինությունների **N 10, N 11, N 12, N 14, N 15 և N 16 սենյակները՝ 102,2 քմ** /հարյուր երկու ամբողջ երկու տասնորդական/ մակերեսով սենյակները **(շինության ծածկագիրը՝ 06-002-0027-0039-001): Պայմանագրին կից ներկայացվում է շինության հատակագիծը, որը կազմում է պայմանագրի անբաժանելի մաս:**
1.2.Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, համաձայն ՀՀ Կառավարությանն առընթեր Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից **26.07.2016 թվականին տրված N 26072016-06-0035** սեփականության վկայականի և նշված անշարժ գույքն ազատ է երրորդ անձանց իրավունքներից (այլ անձանց վաճառված, նվիրված կամ գրավ դրված չէ, արգելանքի տակ չի գտնվում), համաձայն Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի կողմից **22.06.2021թ. տրված N ՄՏ-22062021-06-0326** միասնական տեղեկանքի:
2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
Վարձատուն իրավունք ունի՝
2.1. Վարձակալից պահանջել Գույքն օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:
2.2. Վարձակալից պահանջել Գույքը պահել և հանձնել սարքին և պատշաճ վիճակում:
Վարձատուն պարտավոր է՝
2.3 Գույքը հանձնել սույն պայմանագիրը ստորագրելուց հետո երկու օրվա ընթացքում:
2.4. Գույքը հանձնել դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:
2.5. Վարձակալին տեղյալ պահել Գույքի թերությունների մասին:
2.6 Վճարել գույքահարկը :
Վարձակալը իրավունք ունի՝
2.7. Գույքը հանձնել ենթավարձակալությամբ:
Վարձակալը պարտավոր է՝
2.8. Գույքը պահպանել սարքին վիճակում և օգտագործել դրա նշանակությանը համապատասխան:
2.9.Կատարել էլեկտրաէներգիայի, ջրի, հեռախոսային, աբոնենտային և հարկային այլ վճարումները:
2.10.Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր

պատկանելիքներով:
3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ
3.1. Վարձավճարի չափը **յուրաքանչյուր ամսվա համար կազմում է 41 833 /քառասունմեկ հազար ութ հարյուր երեսուներեք/ ՀՀ դրամ՝ ներառյալ եկամտային հարկը:**
3.3. Սույն պայմանագրի կնքման հետ կապված վճարումը կատարվում է Վարձակալի կողմից:
3.4.Կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է հրաժարվել պայմանագրից: Պայմանագրի ժամկետից շուտ լուծելու դեպքում կողմերը միմյանց պարտավոր են տեղյակ պահել երկու ամիս առաջ:
4. Պայմանագրի ժամկետները
4.1. Կողմերի համաձայնությամբ անշարժ գույքի վարձակալության ժամկետը սահմանվում է **01/04/2021 թվականից /երկու հազար քսանմեկ թվականի ապրիլի մեկ/ և գործում է մինչև 25/12/2022 թվականը /երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի քսանհինգ/:**
4.2. Սույն պայմանագիրը կնքման և նոտարական վավերացման օրվանից 30 աշխատանքային օրյա ժամկետում ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե՝ իրավունքների պետական գրանցման համար:
4.3. Սույն պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված բոլոր վճարները, այդ թվում՝ պետական տուրքը, կատարում է վարձակալը:
4.4. Պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի համաձայնության դեպքում
4.5. Սույն պայմանագրով սահմանված ժամկետի ավարտից հետո՝ վարձակալված հողամասի տիրապետումն ու օգտագործումը վարձակալի կողմից չդադարեցվելը պայմանագրի նորոգման կամ վարձակալության ժամկետի երկարաձգման համար հիմք չի հանդիսանում: Վարձակալի պարտականությունները պահպանվում են նրա կողմից վարձակալված հողամասի ժամկետանց տիրապետման և օգտագործման ամբողջ ընթացքում:
5. Պայմանագրի դադարումը
Սույն պայմանագիրը դադարում է՝
5.1. պայմանագրի ժամկետը լրանալու դեպքում,
5.2. կողմերի փոխադարձ համաձայնությամբ,
5.3. պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքում և կարգով պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում:
5.4. Սույն պայմանագիրը կարող է վարձակալի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծվել՝
5.5. եթե գույքը վարձակալից անկախ պատճառով դարձել է օգտագործման համար ոչ պիտանի,
5.6. ցանկացած այլ հիմքերով՝ դրա մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով վարձատուին:
5.7. Սույն պայմանագիրը կարող է վարձատուի կողմից միակողմանի վաղաժամկետ լուծվել, եթե՝
5.8. վարձակալը 3 ամիս ուշացնում է վարձավճարի մուծումը,
5.9. վարձակալի գույքը օգտագործվում է ոչ նպատակային, խախտվում են օգտագործման պայմանները, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված հիմքերով կամ սույն պայմանագրի խախտումների դեպքում:
6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը
6.1. Սույն պայմանագրով՝ անհաղթահարելի ուժ ասելով հասկացվում է ջրհեղեղ, պայթյուն, հրդեհ, երկրաշարժ, այլ տարեկան աղետներ, պատերազմ, ռազմական գործողություններ, զինված հարձակում, զանգվածային անկարգություններ, մայրուղային խողովակաշարերի վթար կամ այլ նման իրադարձություններ:
6.2. Կողմերն իրենց պարտականությունները մասնակիորեն կամ լրիվ չկատարելու համար ազատվում են սույն պայմանագրով սահմանված պատասխանատվություններից, եթե դա տեղի է ունեցել սույն պայմանագրի կնքումից հետո ծագած այնպիսի անհաղթահարելի ուժի հետևանքով, որը կողմերը չէին կարող կանխել կամ կանխագուշակել և, որի պատճառով վարձակալը չի կարող շարունակել հողի բնականոն օգտագործումը:
6.3. Անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածը մեկ ամսվանից ավելի երկարաձգվելու կամ դրա հետևանքները
6 ամսվա ընթացքում չվերացվելու դեպքում կողմերը պետք է ընդունեն սույն պայմանագրի շարունակման մասին որոշում:
7. Եզրափակիչ դրույթներ
7.1. Սույն պայմանագիրը պարտադիր է կողմերի իրավահաջորդների համար:
7.2. Գույքի սեփականատիրոջ կողմից գույքը երրորդ անձի օտարվելիս՝ վարձակալը պահպանում է վարձակալված գույքի նկատմամբ մինչև գույքի օտարումն իր ունեցած իրավունքները և պարտականությունները:
7.3. Կողմերի միջև տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.4. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են կողմերի կողմից վավերացրած են նոտարի կողմից և գրանցված են անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում:
7.5. Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարում են, որ իրենք գործունակ են. ամբողջովին գիտակցում և հասկանում են պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:
7.6.Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, որոնցից մեկը պահվում է <<Լոռու մարզ>> նոտարական տարածքի նոտարի գործերում, իսկ մնացած օրինակները տրվում են կողմերին:
7.7. Պայմանագիրը ենթակա է գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:
7.8.Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում և ձևակերպում են լրացուցիչ համաձայնագրերով:
7.9. Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

<<ՎԱՐՁԱՏՈՒ>>

ՄՀԵՐ ԲՈՐԻՍԻ ՄԱԿԻՉՅԱՆ

<<ՎԱՐՁԱԿԱԼ>>

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին
Լիազորված անձ՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

երկու հազար քսանմեկ թվականի հունիսի քսանհինգին
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ <<Լոռու մարզ>> նոտարական տարածքի նոտար Արծրունի Շարբաթի Մաղաքյանիս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ սեփականատեր(եր)ի (իրավունքներ)ը ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135-րդ հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյան թիվ ---1784----------ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասներկու հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Արծրունի Շարբաթի Մաղաքյան

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության կառավարության առաջին փոխվարչապետի կողմից հաստատված կարգի N--- 2011թ. N--- հրամանի

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

ԱԼԱՎԵՐԴՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ նախկին շրջխորհրդի շենք
Անուն, ազգանուն (անվանում)

Մասշտաբ 1:200

Լոռի Ալավերդի Սայաթ-Նովա 3
Մարզ համայնք Հասցե

թիվ 10 և 11 սենյակների միջև առկա է ինքնակամ տեղադրված միջնորմ



1.2-րդ հարկ
H-3.25
h-2,95
D-0.5
d-0.1

վարձակալությամբ տրամադրվող տարածք
102,2 քմ

Սամվել Նիազյան
(ստորագրություն) (Անուն, ազգանուն)
...ան վկայականի համարը N 002
...ամսաթիվը ..05.. Դեկտեմբերի 2011թ.
...անցման համարը N 03Ա078219

<< ԱԿԱ ԳՐԱՆԻՏ >> ՍՊԸ-ի
տնօրեն Ա.ՇԱՔԱՐՅԱՆ
Կ.Տ 12.04.2016թ.

Նոտարական ակտի կոդ: 598-20221219-117-6539337
Նոտարական ակտի գաղտնագիր: TSASEN

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Ալավերդի
երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի տասնիններին

Մի կողմից՝ **ՄՀԵՐ ԲՈՐԻՍԻ ՄԱԿԻՉՅԱՆԸ**, ծնված՝ 26/01/1976թ-ին, ՀԾՀ՝ 3601760061, նույնականացման քարտ՝ 014690929, տրված՝ 012-ի կողմից, 11/07/2022թ-ին, հաշվառված՝ Ք. ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿՅԱՆ Փ., 15 /ՏԱՍՆՀԻՆԳ/ Շ, 9 /ԻՆԸ/ ԲՆ հասցեում, (Վարձատու, այսուհետ <<Կողմ 1>>)

և մյուս կողմից՝ **«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմինը** /հասցե՝ ԿԵՆՏՐՈՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ Փ. / 13, գրանցման համար՝ 286.184.1024769, ՀՎՀՀ՝ 02505511/, ի դեմս գլխավոր քարտուղար՝ **Ագնեսա Աղաբաբյանի**, ում անունից համաձայն **09/12/2022** թվականին տրված **N 02/12-1/67147-22** լիազորագրի հանդես է գալիս **ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆԸ,** ծնված՝ 11/11/1961թ-ին, ՀԾՀ՝ 2108610073, նույնականացման քարտ՝ 005765847, տրված՝ 055-ի կողմից, 10/03/2017թ-ին, հաշվառված՝ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Գ. ՇՆՈՂ, 6 /ՎԵՑ/ Փ., 16 /ՏԱՍՆՎԵՑ/ Տ հասցեում,, (Վարձակալ, այսուհետ <<Կողմ 2>>),
<<այսուհետ միասին կանվանվեն Կողմեր>>

1. Համաձայնագրի առարկան
1.1. Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին իրենց միջև <<Լոռու մարզ>> նոտարական տարածքում **25/06/2021 թ.** կնքված **N 1784** ռեեստրի գրանցման համարով անշարժ գույքի վարձակալության պայմանագրում կատարել փոփոխություններ և լրացումներ, և կնքեցին սույն Լրացուցիչ համաձայնագիրը՝
Պայմանագրի 4.1 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
<<Կողմերի համաձայնությամբ անշարժ գույքի վարձակալության ժամկետը սահմանվում է մինչև 25/12/2023 թվականը>>:
2.Համաձայնագրի գործողության ժամկետը
2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից ստորագրելու, նոտարական վավերացման և պետական գրանցման պահից:
2.2. Կողմերի միջև ձեռք բերված՝ սույն համաձայնագրին հակասող բոլոր նախկին պայմանավորվածությունները սույն համաձայնագրի ուժի մեջ մտնելու պահից դադարում են գործել:
2.3. Սույն համաձայնագրի և պայմանագրի դրույթների միջև հակասություններ ծագելու դեպքում կիրառվում է սույն համաձայնագիրը:
3. Այլ պայմաններ
3.1. Սույն համաձայնագիրը կարող է փոփոխվել կամ լրացվել կողմերի համաձայնությամբ:
3.2. Կողմերի պատասխանատվությունը որոշվում է ՀՀ օրենսդրության համապատասխան:
3.3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ մտնելու պահից համարվում է պայմանագրի անբաժանելի մասը:
3.4. Սույն համաձայնագրի, ինչպես նաև պայամանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վաճերի լուծումը կատարվում է դատարանի միջոցով:
3.5. Սույն համաձայնագրի վավերացման և պետական գրանցման հետ կապված վճարումները կատարվում են վարձակալի կողմից:
3.6. Սույն համաձայնագիրը կազմված է հայերեն լեզվով 4 (չորս) օրինակներից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Առաջին օրինակը պահվում է <<Լոռու մարզ>> նոտարական տարածքում, իսկ մյուսները տրվում են կողմերին:
3.7. Սույն համաձայնագիրը երեսուն աշխատանքային օրվա ընթացքում ենթակա է գրանցման ՀՀ Կառավարությանն առնթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումում:

Կողմերի ստորագրությունները՝

<<Կողմ 1>>

ՄՀԵՐ ԲՈՐԻՍԻ ՄԱԿԻՉՅԱՆ

<<Կողմ 2>>

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» Պետական մարմին

Լիազորված անձ՝

ԱՆԴՐԱՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Ալավերդի
երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի տասնիններին
Սույն լրացուցիչ համաձայնագիրը վավերացված և իմ ՀՀ <<Լոռու մարզ>> նոտարական տարածքի նոտար Արծրունի Շարբաթի Մաղաքյանիս կողմից: Կողմերը լրացուցիչ համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ստուգված են: Իմ կողմից վավերացված սույն լրացուցիչ համաձայնագիրը ունի օրենքով նախատեսված հանրային հեղինակություն և լիարժեք ապացուցողական ուժ:

Գրանցված է սեղանամատյանում 4883

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասը հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Արծրունի Շարբաթի Մաղաքյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 22 դեկտեմբերի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

«ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՄ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Ալավերդի Ալավերդի ք. Սայաթ-Նովայի փողոց 3/8 նախկին շրջխորհրդի շենք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի վարձակալության պայմանագիր 25.06.2021թ թիվ 1784, Համաձայնագիր անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին 19/12/2022 թ. սեղանամատյան 4883

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝
Մակերեսի չափը (հա)՝
Նպատակային նշանակությունը՝
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝
Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 22122022-06-0076, գաղտնաբառ՝ SWDCEBWRNDNX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	06-002-0027-0039-001	Նախկին շրջխորհրդի շենք	102.2 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Ժամկետը մինչև՝ 25.12.2023թ:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Հայկուհի Պապիկյան

Զբաղեցրած պաշտոնը՝ Լոռու մարզային ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 22122022-06-0076, գաղտնաբառ՝ SWDCEBWRNDNX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե